

## ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԱՆԻՆ\*

**Բանալի բառեր** – ազատագրություն, անհատականություն, աշխատանք, Արամ Մանուկյան, Արևմտյան Հայաստան, զենք, զինամթերք, ժողովածու, ժողովուրդ, հայրենիք, ՀՅ Դաշնակցություն, նամակներ:

**Հայաստանի Հանրապետության 100-ամյակի կապակցությամբ հայ ընթերցողին ներկայացված «Արամ Մանուկեան. Նամականի» ժողովածուն՝ ընդգրկում է հայ ազատամարտի նվիրյալ, Հայաստանի Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի կողմից 1904 թ. նոյեմբերից մինչև 1915 թվականը գրված 354 նամակներ, որոնցից 325-ը հրապարակվում են առաջին անգամ:**

Ժողովածուն կազմել, խմբագրել և ծանոթագրել է վաստակաշատ պատմաբան Երվանդ Փամբուկյանը՝ այդ գործին նվիրելով 14 երկար ու ձիգ տարիներ: Թեև Արամի ձեռագիրը բավականին գեղեցիկ և ընթերցելի է, բայց նրա նամակներում հանդիպող անհամար գաղտնագրերի ու թվանշանային ծածկագրերի վերծանումն ու հեղափոխական կեղծանունների բացահայտումը, մոռացության մատնված օտարաշունչ տեղանունների և անձնանունների ծանոթագրումը, անկասկած, դժվարագույն խնդիրներ են, ուստիև Երվանդ Փամբուկյանից պահանջել են համառ ու տքնաջան աշխատանք: Ժողովածուն սկզբից մինչև վերջ ուղեկցող ծանոթագրությունները մեծապես դյուրացրել են նամակների ընկալումը՝ միաժամանակ ամբողջացնելով հաղորդվող տեղեկությունները:

Գրախոսվող ժողովածուի մեջ ընդգրկված Արամ Մանուկյանի նամակները հայտնաբերվել են ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում գտնվող ՀՅԴ Կենտրոնական արխիվից: Դրանք հաստատում, լրացնում և ընդլայնում են մեր պատկերացումները 1904–1914 թթ. ժամանակահատվածում Արամ Մանուկյանի գործունեության, հատկապես՝ ազատագրական շարժման համար զենք-զինամթերք հայթայթելու և Արևմտյան Հայաստան (Երկիր) փոխադրելու վերաբերյալ:

Մի զգալի մասով էլ ժողովածուն բացահայտում է Արամի գործունեության՝ մեզ դեռևս քիչ հայտնի կամ լիովին անհայտ կողմերը: Դա վերաբերում է հատկապես Արամի գործունեությանը Օրդուում, որի մասին ցարդ ունեցած մեր տեղեկությունները կրել են կցկտուր բնույթ:

Ներկայացվող ժողովածուն ամենից առաջ գալիս է ամբողջացնելու իր

\*Ընդունվել է տպագրության 25.06.2018:

1 Տե՛ս Արամ Մանուկեան. Նամականի, Եր., ԵՊՀ հրատ., 2018, 672 էջ+ 1 ներդիր: Ժողովածուի կազմութիւն, խմբագրութիւն և ծանօթագրութիւններ **Երուանդ Փամպուկեանի**:

1904–1906 թթ. գործունեության մասին Արամի գրած անավարտ հուշերը, որոնք նա սկսել է շարադրել 1917 թ. փետրվարի 17-ին Թիֆլիսում, իսկ վերջին գրառումները կատարել է նույն թվականի հուլիսի 25-ին Սակիում (Դրիմ): Դրանք առաջին անգամ տպագրվել են 1922–1923 թթ. «Հայրենիք» ամսագրի էջերում<sup>2</sup>, ապա նաև առանձին ժողովածուի տեսքով 1969 թ. Բեյրութում և 1991 թ. Երևանում:

Գրախոսվող ժողովածուն բաղկացած է առաջաբանից, հիմնական մասից, հավելվածից, տեղանունների և անձնանունների ցանկից: Նրանում ընդգրկված նամակները տեղադրված են ժամանակագրական և աշխարհագրական սկզբունքով:

Ժողովածուն սկսվում է համառոտ «Յառաջաբան»-ով, որը ներկայացնում է Արամ Մանուկյանի կենսագրությունը<sup>3</sup> ծնունդից մինչև Արևմտյան Հայաստան անցնելը՝ 1905 թ. փետրվար ամիսը, տրվում են անհրաժեշտ ու շահեկան տեղեկություններ հրատարակվող նամակների գտնվելու վայրի, բովանդակության, դրանք վերծանելու և ծանոթագրությունները կազմելու գործում առկա դժվարությունների ու նրբությունների մասին:

Ժողովածուի հիմնական մասի «Ա» բաժնում, որը կրում է «Արամ Մանուկեան Ատրպատականի մէջ (1904 թ. նոյ. – 1905 թ. փետրուար) խորագիրը, ներկայացված են Արևմտյան Հայաստան անցնելու ճանապարհին՝ 1904 թ. նոյեմբերից մինչև 1905 թ. փետրվարի սկիզբը Ս. Թադեի վանքում հաստատված Արամ Մանուկյանի գրած թվով 14 նամակները: 19-րդ դարի վերջից թուրք-պարսկական սահմանագծի մոտ գտնվող Ս. Թադեի վանքը Արևմտյան Հայաստան զենք-զինամթերք, գործիչներ, զինատար խմբեր և արշավախմբեր ուղարկելու երկու առանցքային հանգույցներից մեկն էր (մյուսը Կարսն էր):

ՀՅԴ Ատրպատականի և Վանի կենտրոնական կոմիտեների ղեկավար գործիչներին ուղղված նամակներում Արամը Երկիր անցնելու խնդրից բացի անդրադարձել է Արևմտյան Հայաստան զենք-զինամթերք փոխադրելու հարցին: Այդ գործը բավական բարդ էր և ենթադրում էր նոր և ավելի ապահով ուղիների բացում, զենք-զինամթերքի առավել նպատակահարմար տեսակների ընտրություն, գնումներ ու փոխադրում, սուրհանդակների, զենք-զինամթերք տեղափոխողների ընտրություն և այլն: Նամակները վկայում են, որ Արամը կարողանում էր շատ արագ վերլուծել իրավիճակը և նոր ու կոնկրետ լուծումներ առաջարկել այս կամ այն գործը իրականացնելու համար: Մասնավորապես նա ՀՅԴ Ատրպատականի կենտրոնական կոմիտեին գրած 1905 թ. հունվարի 18-ի նամակում առաջարկում էր զենքի փոխադրությունն իրականացնել փոխադրողներին կանոնավոր վարձատրելու եղանակով<sup>4</sup>: Արամի կարծիքով՝ այն հասարակություները որ զբաղվում է այդ գործով «...դեռ գիտակցական զոհաբերութեան այդ չափը չունի, իսկ մինչև այդ աստիճանին կը հասցնենք, բանը բանից կ'անցնի. սովորական

2 Տե՛ս Արամ, Յուշեր, «Հայրենիք», Պոսթըն, 1922, դեկտեմբեր, N 2, էջ 23–31, 1923, յունուար, N 3, էջ 49–57, փետրուար, N 4, էջ 81–89, մարտ, N 5, էջ 78–89, ապրիլ, N 6, էջ 77–89, մայիս, N 7, էջ 188–201, յուլիս, N 9, էջ 83–93, օգոստոս, N 10, էջ 127–137, սեպտեմբեր, N 11, էջ 119–136, հոկտեմբեր, N 12, էջ 102–117:

3 Արամ Մանուկյանի կյանքի և գործունեության մանրամասները տես Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Եր., 2009, 268 էջ:

4 Տե՛ս Արամ Մանուկեան. Նամակների, Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 18 (Այսուհետև՝ Նամակների):

դրույթեանը, ազգասիրարար տեղափոխութիւնը այդ կարգի մարդիկ անում են այն ժամանակ երբ ազատ են լինում և տնտեսապէս իրենք չեն վնասուում. չէ՞ որ դրանք մի առանձին տնտեսական ապահովութիւն չունեն, կամայ թե ակամայ մատերի արանքով են նայում այն խնդրին որից քիչ շահ ունեն...»<sup>5</sup>: Այս տողերը լրացուցիչ անգամ վկայում են, որ ազատագրական շարժմանն անդամագրվել էր ստեղծված դաժան իրականությունն ամբողջովին ըմբռնող, իրերն իրենց անուններով կոչող և ամենակարևորը՝ գործերին ընթացք տալու մղումով առաջնորդվող մի քաղաքական գործիչ:

Նամակների ընթերցումից մեկ անգամ ևս համոզվում ենք, որ Արամը սրտացավ, ուղղամիտ, գործող անձանց ըստ արժանվույն գնահատող գործիչ էր, որ նրա համար գլխավորն ընդհանուր գործի հաջողությունն էր: Նա քննադատում և անարգանքի պլանին էր գամում Ս. Թադեի վանքում ոմն Արտուրի անփույթ, անպատասխանատու գործելակերպն ու մեծամիտ կեցվածքը: Այսպէս, 1904 թ. դեկտեմբերի 5-ով թվագրվող նամակում (ուղղված էր Խոյուն գտնվող ՀՅԴ գործիչ Մալխասին) Արամը գրում է հետևյալը. «... Արտուրը այնքան շտապում եկաւ որ չկարողացայ ինչ հարկաւորն է գրել. առհասարակ շատ բաների դէմ բողոք ունեմ. ամէնից առաջ նա կանոնաւոր հաշիւ չտեսաւ ոչ նիւթական և ոչ ռազմականի: Ապրանքները երէկ հանել տուի մաքրելու համար, խայտառակ դրույթեան մէջ էին. ես չգիտեմ թէ սա ինչ տեսակ ապրանք պահել է. թիւրքն էլ այդպէս չէր անել ինչ արել ենք մենք...»<sup>6</sup>:

Դրան հակառակ, Արամ Մանուկյանն իր կուսակցական ընկերների հարձակումներից պաշտպանում էր ազգանպաստ գործունեություն ծավալած, սակայն, ոմանց կողմից նախանձի թիրախ դարձած վանահայր Գևորգ վարդապետ Նալբանդյանին: Չխորշելով հնարավոր հակազդեցությունից՝ նա գովեստի բազում խոսքեր էր ուղղում վանահոր հասցեին: Մասնավորապէս նշում էր, որ Գևորգ վարդապետը ամեն տեսակի հարմարություններ է ստեղծում ազատագրական գործի համար և շեշտում էր հետևյալը. «Սա շատ կողմերից կարևոր բան է. ի նկատի ունեցէք որ դրանից լաւին չենք արժանանայ. կրթածները այն սարի գլխին պատիւ չեն համարի ապրել, տգէտներն էլ կը գան իրենց փորի համար, իսկ սա գոնե աշխատում է վանքը շէնացնել. սրա միակ թուլութիւնը այն է, որ ամէն բանից քաշում է վանքը վերակենդանացնելու համար. իսկ մեզ և մեր գործին ոչ մի պարագայում չէ վնասում, ընդհակառակը կարեցածին չափ օգնում է. հաւատացէք որ եթէ նա չլինի՝ այն շրջանում ոչ կարող էինք պտըտուել և ոչ ապրել. ինչ որ պատահում է նրան ենք ներկայացնում բէկերի և խաների առաջ և ամէն անգամ, ինչպէս փաստերը ցոյց են տալիս, պարզերես է դուրս գալիս...»<sup>7</sup>:

Ժողովածուի «Արամ Մանուկեան Վան-Վասպուրականի մէջ (1905 թ. փետր. – 1906 թ. հոկտ.)» հատվածը ամենաընդարձակ բաժինն է և ներառում է նշված ժամանակահատվածում Արամի գրած թվով 240 նամակներ: Դրանք չափազանց հետաքրքրական տեղեկություններ են պարունակում ինչպէս Վան-Վասպուրականում զենք-զինամթերք կուտակելու, այնպէս էլ

5 Նամակների, էջ 25:

6 Նույն տեղում, էջ 18:

7 Նույն տեղում, էջ 29:

կազմակերպական, գաղափարաքարոզչական աշխատանքների, ՀՅԴ գործիչների ընկերական հարաբերությունների մասին: Մենք տեսնում ենք, թե ինչ կոնկրետ առաջարկություններ էր անում Արամը՝ Երկիր գենք-գինամ-թերքի փոխադրման գործը բարձր հիմքերի վրա դնելու համար: Նրա մտածողության առանցքում մի կողմից՝ եղած միջոցների արդյունավետ օգտագործումն էր, մյուս կողմից՝ դրանց ավելացումը: Մասնավորապես, այդ նպատակով Արամն առաջ էր քաշում այս կամ գինատեսակը մասերով առաքելու նպատակահարմարության հարցը: Նման մոտեցումը հիմնավորվում էր նրանով, որ դրանց մի մասը տեղափոխման համար ծանր էր ու վտանգավոր, ուստի կարելի էր պատրաստել կամ ձեռք բերել տեղում, նույնիսկ ավելի էժան գներով: Այս շրջանում գրված նամակները մանրամասն տեղեկություններ են պարունակում նաև ՀՅԴ-ի կողմից գինված ապստամբության նախապատրաստման մարտավարությանն անցնելու, քարոզչական և կրթական գործին ավելի մեծ տեղ հատկացնելու, ներկուսակցական և միջկուսակցական հարաբերությունների, դրանցում Արամի ունեցած դերակատարության մասին և այլն:

Նամակները հարստացնում են նաև մեր տեղեկությունները Արամ Մանուկյանի բնավորության մասին: Այսպես, Վանից Խոյուն գտնվող Մալխասին ուղղված նրա առաջին իսկ նամակի բովանդակությունը (1905 թ. փետրվարի 14) թույլ է տալիս ասել, որ, ի դեմս Արամի՝ Վան էր անցել գգուշավոր, խոհեմ և հավասարակշիռ մի գործիչ: Նա գրում էր. «Այստեղի (Վանի - Ա.Ա.) կեանքի մասին գրելը վաղ եմ համարում յայտնի պատճառներով... Երբ մի քիչ աւելի մօտից կը ծանոթանամ, և որոշ դիրք կը բռնեմ, միայն այն ժամանակ կրնամ գրել քեզ և մնացած ընկերներին»<sup>8</sup>:

Շրջահայաց և շատ արագ մտածող Արամը ըստ երևույթին նկատել էր տեղի որոշ գործիչների վերապահ վերաբերմունքն իր նկատմամբ: Այդպես ենք ասում հենվելով նրա հետագա մի շարք նամակների վրա, որոնցում գրված է, որ, չնայած այն բանին, որ ՀՅԴ Արևելյան Բյուրոն Արամին Վան էր գործուղել որպես ՀՅԴ Վան-Վասպուրականի կենտրոնական կոմիտեի լիիրավ անդամ, նրան այստեղ տվել էին սոսկ խորհրդակցական ձայնի իրավունք: Նամակների բովանդակությունը թույլ է տալիս ասել, որ Արամը համբերատար, հետևողական, շրջահայաց և խելամիտ գործունեության շնորհիվ կարողացավ հաղթահարել իր նկատմամբ առկա վերապահ վերաբերմունքը և ընդունելի գործիչ դառնալ Վանում:

Վան թափանցած Արամի համար ցավ էր, որ տեղում չկար անհրաժեշտ բարձրության վրա գտնվող ղեկավարություն, որը կկարողանար կազմակերպել և ուղղություն տալ ժողովրդին. «Բայց ցավալի է ասել, որ ի դէպ ժողովրդական այդ մեծ ու ծով տրամադրութեան, երկիրը գուրկ է կազմակերպութիւնից, մանաւանդ ղեկավարելու ընդունակութիւն ունեցող մարդկանցից: Տեղիս կազմը ամենայն բարեխղճութեամբ և վստահութեամբ կարելի է պնդել, որ բոլորովին անձեռնհաս է այդ գործը ղեկավարելու. ոչ միայն անձեռնհաս է այլև գուրկ է յեղափոխական գաղափարից և հասարակական խնդիրները ըմբռնելու և ընդհանրացնելու ընդունակութիւնից»<sup>9</sup>:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 51:

Այս խոսքերը միգուցե խիստ թվան, սակայն, երբ նկատի ենք ունենում այն փաստը, որ հետագա երկու տարիների ընթացքում Արամին հաջողվեց մեծապես ուժեղացնել և բազմանդամ դարձնել ՀՅԴ Վան-Վասպուրականի կազմակերպությունը, չենք կարող չպնդել, որ նա իրավունք ուներ այդպես բարձրաձայնել իր մտածածը: Հիշենք, որ Արամի գործունեության ժամանակաշրջանում երկրամաս էր ներկրվել ավելի շատ զենք, քան նախորդ տարիներին՝ միասին վերցրած: Բացի այդ, քննվող ժամանակաշրջանում նահանգում ՀՅ Դաշնակցությունն իր ձեռքն էր վերցրել դատական գործը՝ փրկելով հայությանը թուրքական դատարանների ապօրինություններից և դրանց հետևող գրկանքներից, նշանակալի հաջողությունների էր հասել նաև քրդերի դեմ պայքարում<sup>10</sup>:

«Դէպի Վիեննա Հ.Յ.Դ. չորրորդ ընդհ. ժողովին (1906-1907 թթ.)» վերնագիրը կրող «Գ» բաժնում ներառված 19 նամակներից 17-ը Արամի կողմից գրվել են Վիեննա մեկնելու ճանապարհին՝ Ս. Թադէի վանքում, 1906 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Եվ այդ երկու ամիսների ընթացքում Ս. Թադէի գծով մի քանի հարյուր հրացան, մոտ 100.000 փամփուշտ և այլ ռազմամթերք էր փոխադրվել Վան-Վասպուրական: Բաժինն ավարտվում է Վիեննայից 1907 թ. ապրիլին գրված երկու նամակներով, որոնցից մեկում Արամը, ինչպես միշտ, Վանի համար ՀՅԴ պաշտոնաթերթի օրինակներ էր խնդրում:

«Վերադարձ Վան-Վասպուրական (1907-1909 թթ)» բաժնում տեղ են գտել ՀՅԴ IV ընդհանուր ժողովից հետո Վան վերադարձած և մինչև 1909 թ. մարտ ամիսն այստեղ հաստատված Արամի մոտ 4 տասնյակ նամակները, ինչպես նաև Կ. Պոլսում 1909 թ. սեպտեմբերի 3-ին գրած մեկ նամակ: Մինչև 1908 թ. հուլիս ամիսը շարադրված Արամի նամակները, որոնք հասցեագրված էին գերագանցապես ՀՅԴ Արևմտյան և Արևելյան Բյուրոներին, հարստացնում են մեր պատկերացումները ՀՅԴ IV ընդհանուր ժողովից հետո Վանում ծավալված ակտիվ քարոզչական և կազմակերպական աշխատանքների, թուրք ընդդիմադիր տարրերի հետ համագործակցություն հաստատելու ՀՅԴ ծրագրերի և քայլերի մասին: Նամակները հաստատում են նախկինում ունեցած մեր պատկերացումներն այն մասին, որ այդ շրջանում մեծ տեղ էր հատկացվում քարոզչական գործին: Գրեթե բոլոր նամակներում Արամը պահանջում էր հեղափոխական գրականություն և տպագրական գործի համար անհրաժեշտ սարքավորումներ ու նյութեր:

Արամ Մանուկյանը իր գործունեության ցանկացած վայրում և ժամանակաշրջանում մեծ տեղ է հատկացրել ՀՅԴ շարքերում կարգապահության հաստատմանը՝ դրան ենթարկվելը համարելով բոլորի պարտականությունը: Նրա համար կարգուկանոնը գործի հաջողության կարևորագույն գրավականներից էր: Մասնավորապես Տարոնում գործող իր մտերիմ կուսակցական ընկեր Ռուբենին (Մ. Տեր-Մինասյան) ուղղված 1907 թ. նոյեմբերի 8-ի նամակում, որը կրում է հանդիմանական բնույթ, կարդում ենք հետևյալը. «Միրելիս! Դրսի ընկերների դէմ կռելը, նրանցից պահանջելը որ հակադիսցիպլինական (հակակարգապահական – Ա.Ա.) քայլեր չանեն, բուական չէ, դրանով մեր վերքերը չեն բուժի. մենք ինքներս պէտք է մեր կեան-

<sup>10</sup> Տե՛ս Ասյան Ա., նշվ. աշխ., էջ 53-54:

քով և գործով դիսցիպլինի ամենաջերմ կողմնակից լինենք. մեզ թոյլ չպիտի տանք ո՛չ մի կոմպրոմիս, այլապէս մենք կորած ենք... Այս սրիկան (խոսքը Կարսից Խլաթ անցած Զնդո ծածկանունով գործչի մասին է, որի իսկական անունը հայտնի չէ – Ա.Ա.) զինուորական ժողովի վճռով վնասուել է դուրս... Դու ոչ մի դէպքում նրան չպիտի ընդունէիր, մանաւանդ չպիտի գործ կատարէիր նրա ձեռքով: Մենք նրան գրելու ենք Պուրակից (Խլաթ – Ա.Ա.) գայ հոս, իբր թէ խորհրդակցելու, և ուղղակի դուրս ենք շարտելու...»<sup>11</sup>:

«Արամ Մանուկեան Օրտուի մէջ Ազգ. Վարժարանի տեսուչ (1911 թ. նոյ. – 1912 թ. օգոստոս)» բաժինը, ինչպէս արդէն նշել ենք, լրացնում է Արամ Մանուկեանի գործունեության այս շրջանի վերաբերյալ ցարդ մեր ունեցած խիստ սահմանափակ տեղեկությունները: Նախկինում հայտնի էր միայն, որ նա 1909 թ. հունիսին դուրս էր եկել Վանից՝ բուժվելու նպատակով Եվրոպա անցնելու համար, սակայն հրավերք ստանալով, անցել էր Օրդու և ստանձնել տեղի վարժարանների տեսուչի պաշտոնը<sup>12</sup>: Թե կոնկրետ ինչով էր այնտեղ զբաղվել Արամ Մանուկեանը և կամ ինչ էր իրենից ներկայացնում Օրդուն, մեզ համար մնում էին բաց: Նամակների բովանդակությունից պարզվում է, որ Օրդուում Արամ Մանուկեանը լուրջ հաջողությունների էր հասել տեսչական և ուսուցչական գործունեության ընթացքում: Ս. Զավարյանին հղած 1910 թ. փետրվարի 10-ի նրա նամակում կարդում ենք հետևյալը. «Այժմ թէև իմ աչքում պակասաւոր, բայց այստեղ հասարակութիւնը իմ մասին ի գուր տեղը մեծ կարծիք է կազմել, իբրև լավ վարժապետի և տեսչի: Անցեալ տարի դպրոցական յեղ[ափոխութիւն] է եղել հոս և ամէն բան տակն ու վրայ արել. 500 աշակերտ-աշակերտուհիներ են. ունի և մանկապարտէզ. աշակերտները շատ շփացել էին: Անցեալ տարւայ տեսչին վախեցրել են ատրճանակով... տարւայ սկիզբը մի քանի անհամութիւններ արին, բայց դիսցիպլինը խիստ բռնելով, մօտիկութիւն ստեղծելով, մանաւանդ խոսակցութեամբ ու ընթերցանութիւններով, կարգի բերի, այժմ ամէնքը յարգանքով են վերաբերում»<sup>13</sup>:

Արամն այստեղ ամեն ինչ արեց կրթության անմխիթար վիճակը լավացնելու համար: Մասնավորապէս որակյալ դասախոսություններ կազմելու համար նա օգտվեց ռուսերեն գրականությունից, կազմեց նոր դասսանյութեր, որպեսզի մատուցի վարժարանի սաներին: Հավանաբար 1911 թ. գարնանը, Ռուբենին (Տեր-Սինասյան) գրած մեկ այլ նամակում Արամը իր ուսուցչական գործունեության մասին նշում է. «Այս տարւայ փորձս ցոյց տուա որ կարող եմ լաւ վարժապետ լինել. այս էլ մխիթարութիւն է...»<sup>14</sup>:

Արամի գրեթե բոլոր նամակներում նկատելի է հոգատարությունը, սերը իր շրջապատի՝ ազատագրական շարժման նվիրյալների և իր աշակերտների նկատմամբ: Նա փորձում էր օգտակար լինել օգնության կամ օժանդակության կարիք զգացողներին: Մասնավորապէս, Բուրսայից, ուր նա անցել էր կարճ ժամանակով՝ ծանր հողացավը բուժելու նպատակով, ՀՅԴ Կարինի գործիչներից Հովսէփ Տեր-Դավթյանին գրած 1910 թ. հունիսի 29-ի նամակից տեղեկանում ենք, որ նա փորձում էր իր աշակերտներից մեկին

11 Նույն տեղում, էջ 485:

12 Տե՛ս Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 84:

13 Նույն տեղում, էջ 530:

14 Նույն տեղում, էջ 548:

օգնել անվճար սովորելու իրավունքով ընդունվելու Կարինի Սանասարյան վարժարան, քանի որ, նա «լաւ տղայ է և տէր-տիրական չունի»<sup>15</sup>:

Արամը զուգահեռաբար ակտիվորեն զբաղվել է կուսակցական գործերով, կոնկրետ քայլեր կատարել ազատագրական շարժման առջև ծառայած խնդիրների լուծմանը նպաստելու համար: Ս. Զավարյանին ուղղված նամակներից մեկում նա հայտնում էր, որ ուղարկում է Օրդուի կուսակցական ընկերներից հանգանակված 18 ոսկու անդորրագիր՝ որպես օժանդակություն Տարոնում մարտական գործին<sup>16</sup>:

«Արամ Մանուկեան Զուիցերիոյ մէջ (1911 թ. նոյ. – 1912 թ. օգոստոս)» բաժնի նյութերից տեղեկանում ենք, որ 1911 թ. ուսումնական տարվա վերջում հեռանալով Օրդուից, Արամը հուլիսին անցնում է Կ. Պոլիս և այստեղ մնում 4 ամիս: Ի դեպ, այստեղից նա անգամ փորձում էր օժանդակություն ցուցաբերել Օրդուին<sup>17</sup>: Կ. Պոլսում նա նախ մասնակցում է Շրջանային ժողովին, ապա նաև 1911 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կայացած ՀՅԴ VI ընդհանուր ժողովին իբրև Վանի պատգամավոր: Այնուհետև տեղեկանում ենք, որ 1911 թ. հոկտեմբերի վերջերին կամ նոյեմբերի սկզբներին Արամն անցնում է Շվեյցարիա՝ բուժվելու: Միաժամանակ նա աշխատում էր «Դրօշակ»ի խմբագրությունում՝ կատարելով վարչական-հարաբերական գործերը, ինչպես նաև գրում էր ազատագրական շարժման նահատակների վերաբերյալ հոդվածներ, ուսանողների առջև հանդես էր գալիս դասախոսություններով: Նամակներում տեղեկություններ կան նաև Շվեյցարիայում Արամի բուժման մասին: Չնայած որ Օրդուի Ազգային վարժարանի հոգաբարձուները և համայնքի անդամները նրան խնդրում էին վերադառնալ և ստանձնել վարժարանի տեսչությունը՝ Շվեյցարիայից Արամը Կ. Պոլսի և Թիֆլիսի վրայով 1912 թ. սեպտեմբերի սկզբին անցնում է Վան:

«Արամ Մանուկեանի վերադարձը Վան (1912-1915 թթ.)» բաժնի առաջին անգամ հրապարակվող նամակները, որոնք գրվել են 1912 թ. սեպտեմբերից 1913 թ. փետրվար ամիսների ընթացքում, հաստատում և լրացնում են այդ ժամանակահատվածի մասին մեր տեղեկությունները: ՀՅԴ Արևմտյան Բյուրոյին, Ամերիկայի կենտրոնական կոմիտեին և «Դրօշակ»ին հղած նամակներում Արամ Մանուկյանը մանրամասն ներկայացնում է հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների թշնամանքի, նրանց կողմից քրդական հարձակումներից պաշտպանվող հայերին ձերբակալելու, զինաթափելու, ՀՅԴ Վան-Վասպուրականի կազմակերպության կողմից ձեռնարկվող ինքնապաշտպանական քայլերի մասին: Ներկայացնենք մի քանի հատվածներ այդ նամակներից: Այսպես, 1912 թ. դեկտեմբերի 3-ին ՀՅԴ Արևմտյան Բյուրոյին, Արամը հաղորդում էր, որ Վանի նահանգի «կառավարութիւնը շատ խորթ աչքով է նայում ինքնապաշտպան հայերու վրայ: Մանդանի հայերը հերոսական կռիւ ունեցան Սէիդ բէյի հետ. նրան ծանր վիրաւորել են և ուրիշ 3-ին սպանել... Բայց անցեալ անգամ նոյն հայերուն զինաթափ ըրին, բանտարկեցին, հազիւ հազար զօրով բանտից ազատել տինք. բայց զէնքերը գնաց կորան... կ'ըսեն արգիլւած զէնքեր են: Այս և այն գաւառում դեռ

15 Նույն տեղում, էջ 537:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 531:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 549:

շարունակում են գինաթափութիւնը հայերու, ի հարկէ այն մասերում ուր հայերը թոյլ են և ոչ լաւ կազմակերպած, մնացած տեղերում գինւած խաղաղութիւն է»<sup>18</sup>:

ԸՅԴ Արևմտյան Բյուրոյին հղած 1913 թ. հունվարի 13-ի նամակում ևս Արամն արձանագրում էր թուրքական իշխանությունների հակահայկական նպատակները. «Սխալ է, որ կը կարծէք թէ հայերը իրաւունք ունեն նոյն իսկ իրենք գիրենք պաշտպանելու... քիւրդ աւազակներուն կամ չարագործներուն դէմ եղած հակահարւածը կառավարութիւնը իրեն վրայ կը վերցնէ և անոնց փոխարէն ինքը կը պատասխանէ... Հասարակ ժողովուրդը շարած մնացել է, կառավարութեան դէմ պաշտպանվել թէ քրդերուն. Բայց երկուսի դէմ էլ երևի ընդհարումը անխուսափելի է: Ըիշտ է որ անմիջական կերպով խրախոյսներ չկան կառավարութեան կողմէ քրդերուն, բայց աչք գոցելու քաղաքականութիւնը քրդերու համար, դրան է հաւասար»<sup>19</sup>:

Նույն նամակում Արամը տեղեկացնում էր իրենց ձեռնարկած պատասխան քայլերի մասին, որոնք անչափ կարևոր են հայ-թուրքական, հայ-քրդական հարաբերությունները, թուրքերի և քրդերի դէմ հայերի պատասխան գործողությունները ճիշտ գնահատելու առումով. «Տեսնելով որ հեռագիրները և Պոլսոյ հրահանգները չեն օգնում, ստիպուեցանք բոլոր գաւառներում խմբեր հանել... այժմ 8-10 խումբ կը պտտէ: Կառավարութիւնը աւելի մտահոգ է մերոնց քան աւազակների հանդէպ: Մեր երևալէն վերջ, մի քիչ մթնոլորտը խաղաղուեց, ժողովուրդը սրտապնդուեց. ամէնքը կը գանգատուն թէ ինչո՞ւ մենք ուշ երևան ելանք... ինչ որ է, լաւ է ուշ քան երբէք. մենք մեր ուժերը մոբիլիզէ արինք. ժողովուրդը ինքնապաշտպանութեան համար հսկայական զոհողութիւններ է անում. միայն Շատախում 6 ամսւայ ընթացքում 1500 ոսկի է տուել»<sup>20</sup>: Մեկ այլ, նույն թվականի սեպտեմբերի 28-ի նամակում հաղորդելով հայերին իրավագրկելու քրդական փորձերի ակտիվացման և մի շարք վայրերում նրանց հաջողությունների մասին, Արամը գրում էր հետևյալը. «...այստեղ իհարկէ յանցաւոր ենք և մենք, որովհետև իսկոյն չենք երևացել. քրդերը ասել են, որ վերջացել է ո՛չ միայն սահմանորոշութիւնը այլև հայ ֆիդան... ի հարկէ ընկերները թէև ուշ գլխի են ընկնում և անմիջապէս խմբեր հանում. այդ կը լինի մօտաւորապէս մի ամիս. այնուհետև ոչ մի դէպք չէ պատահել և քրդերը մտել են իրենց ծակերը»<sup>21</sup>:

1912 թ. դեկտեմբերի 3-ին «Դրօշակ»ի խմբագրությանը հղած նամակում Արամը գրում էր, որ ի պատասխան ԸՅԴ Վան-Վասպուրականի գործիչներից Ռաֆայել Երեցյանի սպանության և թուրքական կառավարությանն ուղղված հայ գյուղացիների դիմումներն անտեսելուն, վերջիններս «սուկալի գզւած, գազազւած և վրէժով լեցւած տուն դարձան ու արիւնը արիւնով լւացին, այն էլ իրենց ձեռքով: Անշուշտ իմացաք որ Ռաֆայելի սպանիչներէն գլխաւոր Հաջի Եաղուր, իր որդին, Ռաշօ, մէկ ոստիկան և 4 ուրիշը սպանել է հայերի ձեռքով Խրոխտենց գիւղի մօտերը... Դէպքի տպաւորութիւնը շատ ծանր է կառավարութեան և քրդերու վրայ և շատ լաւ

18 Նույն տեղում, էջ 575:

19 Նույն տեղում, էջ 580:

20 Նույն տեղում, էջ 567:

21 Նույն տեղում, էջ 571:



հայերու վրայ»<sup>22</sup>: Այս և մյուս նամակների հաղորդումները հաստատում են ժամանակակիցների հուշերում և արխիվային նյութերում հանդիպող այն վկայությունները, որ երիտթուրքական հեղաշրջումից հետո հրապարակավ թուրքերի հետ հակագործակցող ՀՅԴ-ն Վան-Վասպուրականում գաղտնի կերպով շարունակում էր գինվելու ուղղությամբ աշխատանքները: Սույն բաժնում ընդգրկված են նաև վերահրատարակվող նամակներ, գրություններ և փաստաթղթեր, որոնք մեծամասամբ վերաբերում են 1914-1915 թթ., մեկը՝ 1918 թ.:

«Հավելված»-ում ներկայացված են Արամ Մանուկյանի կողմից տարբեր ժամանակներում ազատագրական շարժման նահատակներին ձոնված և «Դրօշակ»-ում<sup>23</sup> ու տարբեր աշխատություններում տպագրված թվով 8 հիշատակարաններ:

Գրախոսվող ժողովածուն ունի բազմաթիվ արժանիքներ: Այն նախ և առաջ հնարավորություն է տալիս առավել լայն պատկերացում կազմել հայ ազատամարտի հորձանուտում հայտնված Արամի ամենօրյա գործունեության, մտքերի և ծրագրերի, ինչպես նաև ազատագրական շարժման դժվարին ընթացքի ներքին կողմերի մասին: Նամակները վեր են հանում Արամի լայն մտահորիզոնը, ազնվությունը, ձշմարտախոսությունը, հավասարակշռվածությունն ու գործնականությունը:

Հրապարակված նամակներն ունեն աղբյուրագիտական բացառիկ արժեք, քանզի գրված են ազատագրական պայքարի բոհում, օր-օրի՝ դեպքերի ընթացքն ուղղորդող և շոշափելի ազդեցություն ունեցող գործիչներից մեկի կողմից:

Ժողովածուի անկրկնելի արժանիքներից մեկն էլ այն է, որ նա մեզ մտովի առաջնորդում է դեպի պատմության խորքերը, մասնակից դարձնում դրամատիզմով, հերոսական մաքառումներով, ձեռքբերումներով, հույսերով, և, միաժամանակ, գրկանքներով, կորուստներով ու հուսախաբություններով հագեցած պատմությանը: Դա հնարավորություն է տալիս պատկերացում կազմել Արամ Մանուկյանի բարոյական նկարագրի, մտածողության մասշտաբների, կենսակերպի մասին՝ անմիջապես նրա հետ հաղորդակցվելու, նրա գրչի շարժումը տեսնելու, շունչը զգալու միջոցով:

Վաստակաշատ պատմաբան Երվանդ Փամբուկյանի բազում տարիների աշխատանքի արդյունքը հանդիսացող այս Նամականին մեծապես լրացնում է հայ ազատամարտի նվիրյալ Արամ Մանուկյանի 1904-1913 թթ. գործունեության և հայ ազատագրական շարժման պատմության աղբյուրագիտական հենքը: Նա կդառնա անհրաժեշտ և օգտակար գիրք ազատագրական շարժման պատմության առավել մանրագնին ուսումնասիրության նպատակ ունեցող պատմաբանների ու Արամ Մանուկյանին գնահատող յուրաքանչյուր հայի համար:

*Արմեն Ս. Ասրյան  
Պատմ. գիտ. թեկնածու*

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 573:

<sup>23</sup> Տես «Դրօշակ», ժնև, 1912, NN 5, 6, 7-8:

**Արմեն Ս. Ասրյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Արամ Մանուկյանի կյանքի և գործունեության պատմությունը: Հեղինակ է երկու մենագրության, մեկ ուսումնական ձեռնարկի, մեկ ուսումնասօժանդակ գրքույկի և ավելի քան երեք տասնյակ գիտական հոդվածների:

## Summary

### ARAM MANUKYAN'S COLLECTION OF LETTERS

Armen S. Asryan

**Key words** – liberation, individuality, work, Aram Manukyan, Western Armenia, weapon, ammunition, collection, people, motherland, ARF Dashnaktsutyun, letters.

On the occasion of 100 Anniversary Republic of Armenia the collection entitled “Aram Manukyan: Collection of Letters” is presented to the Armenian reader for the first time. It includes 354 letters by the famous freedom fighter of Armenian liberation movement, the founder of the First Republic Aram Manukyan written from November 1904 up to 1915: 325 letters are published for the first time.

The collection is comprised, edited and commented by the historian YervandPambukyan, who has exercised a really tremendous, hard and thankful work dedicating to this job 14 long and tough years. Though Aram's manuscripts are rather beautiful and legible but the deciphering of his letters' numerous codes and digital cryptograms, the revelation of revolutionary pseudonyms, the commenting of forgotten toponyms written in foreign language and personal names is, indeed, the hardest task and does need diligent work.

Comments that are accompanying the collection from beginning up to the end have greatly eased the perception of the letters by simultaneously accomplishing the transmitted information.

Aram Manukyan's letters included in the reviewed collection were found from ARF Dashnaktsutyun's archives in far off city of Boston.

## ПИСЬМА АРАМА МАНУКЯНА

Армен С. Асрян

**Ключевые слова** – освобождение, индивидуальность, работа, Арам Манукян, Западная Армения, оружие, боеприпасы, сборник, народ, родина, АРФ, письма.

Сборник “Арам Манукян. Письма”, представленный армянскому читателю в связи с 100-летием Республики Армения, содержит 354 письма выдающегося деятеля армянского национально-освободительного движения, основателя Республики Армения Арама Манукяна с ноября 1904 г. до 1915 г.; 325 из них публикуются впервые.

Сборник составлен, отредактирован и комментирован историком Ервандом Памбукяном, посвятившим этому делу 14 долгих лет. Хотя почерк Арама довольно красив и разборчив, расшифровка множества кодов и цифровых шифров, встречающихся в его письмах, раскрытие революционных псевдонимов, комментирование преданных забвению иноязычных топонимов и личных имен – это, несомненно, труднейшая задача, потребовавшая кропотливого труда. Сопровождающие сборник от начала до конца комментарии во многом облегчают восприятие писем, одновременно придавая целостность сообщаемым сведениям.

Письма Арама Манукяна, вошедшие в сборник, были обнаружены в Центральном архиве АРФ, находящемся в городе Бостон, США.

### REFERENCES

1. **Aram**, Husher, “Hayreniq”, 1922, dektember, N 2, pp. 23-31, 1923, hunvar, N 3, pp. 49-57, petrvar, N 4, pp. 81-89, mart, N 5, pp. 78-89, april, N 6, pp. 77-89, mayis, N 7, pp. 188-201, hulis, N 9, pp. 83-93, ogostos, N 10, pp. 127-137, september, N 11, pp. 119-136, hoktember, N 12, pp. 102-117.
2. Aram Manuykyan. Namakani: Er., EPH hrat., 2018, 672 ej+ 1 nerdir: Zhoghovatsui kazmutyun, khmbagrutyun ev canotagrutyunner **Er. Pampuqyani**.
3. **Asryan A.**, Aram Manukyan: kyanqə ev gorcə (azatagrakan šarjman ev ankax petakanut‘yan verakangnman ughinerum, Er., 2009, 268 p.